կեանքի և գոյքի կատարեալ անապահովութիւն։ Ցափշտակութիւնները, թալաններն ու սպանութիւններն այլևս սովորական երևոյթ են դարձել։ Աւազակների յանդգնութիւնն անցել է ամեն չափ ու սահման և ստացել տարբերային բնոյթ։ Նրանք գործում են զինուած, կազմակերպուած, խիզախ, յափշտակելով, կողոպտելով։ Ամեն ինչ ենթարկուած է աւազակների թալանին. մի խօսքով կատարեալ անարխիա է տիրում շրջանումս, որին վերջ տալու համար անզօր է զգում իրեն տեղական կառավարական իշխանութիւնը. և արդէն քանիցս նրա ուղարկած զօրքերը փախուստի են ենթարկուել։ Աւազակները խրախուսուած իրենց յաջողութիւններից, այսօր սիստեմատիկ կերպով առաջ են տանում իրենց սխրագործութիւններ, թալաններն ու բռնութիւնները։ Նրանցից նշանաւորներն են Ռէզա Զարլանդ խաները, Մուգուի խաջէն և Ալէքսի Մանուկեան (Դրախտակցի), որոնք իրենց զինուած խմբերով ազատ, համարձակ լեռներից ու ձորերից գիւղերն են իջնում, թալանում, կողոպտում, հարստահարում և նորից լեռներն են քաշւում, ճանապարհներին երթևեկող գիւղացիներին կողոպտելու համար։ Սրանք յարձակւում են կարաւանների վրայ, կտրում ճանապարհների առաջը և ամեն ինչ աւարի են տալիս։ Այսպէս ամենուրեք ալան-թալան, սպանութիւն և կեանքի, գոյքի անապահովութիւն։ Գիւղացիութիւնն ահաբեկուած է, նա չի կարողանում քաղաք փոխադրել ցորեն, գարի, ալիւր ճանապարհների անապահովութեան պատճառով։ Նա մնացել է անտէր ու անօգնական և օրըստօրէ աւազակների ճիրանների տակ հիւծւում և արիւնաքամ է լինում։

Հաղորդակցութեան եւ փոխադրութեան միջոցներ։ Այս գաւառում ճանապարհորդելը և ապրանքներ ու մթերքներ փոխադրելը կապուած է բազմաթիւ դժուարութիւնների և սարսափելի նեղութիւնների հետ։ Ամբողջ գաւառում ոչ հեռագիր կայ և ոչ էլ պօստ։ Այստեղ դու չես գտնել նոյնիսկ էժանագին կառքեր, ձի կամ ջորի. առանձնապէս կառք, ձի կամ ջորի վարձելը թէ դժուար է և թէ անասելի թանգ։